


# ՅԵՐԱԳԻՐ-ԱՇԽԱՏԵՎԻՐ

ՎԵՐԱԿԱԶՄԵԼ ՀԵՂԱԿԵՐՆ ԿՈՒՍՈԿՑՈՒԹԵԱՆ



— · —

ՏՊԱՐԱՆ «ՊԱՀԱԾԱԼՈՒ»

ՓԲՈՎՔԻ ՏԵՂԻՆԱ

1913

**ՅՐԵՎԱՆԻ-ԿԵՆՈՒՅԻՒՄ**

**ԱԵՐԾԱՇՈՄԵԼ ՀԱԶԱՐԵՐՆ**

**ԿՈՒՄԱՑՈՒԹԵՐՆ**

**ՏՊԱՐԱՆ «ՊԱՀԱՒԻ»Ի**

**ՓԲՈՎԻՑԷՐՆ**

**1913**

ԱՅՐԱՄԱԿԱՆ ԱՅՆՈՒԵԳԻՔ

ՎԵՐԱԿԵՎՈՄԵԸ, ՀՆՁԵԿԵԸ

ԿՈԽՍՀԱՑՈՒԹԵԸ

ԱՐԵԲԻԿԱՅԻ ՄԱՍՆԱՃԻԴԵՐՈՒՆ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԿԾ 1. — ՎԵՐԱԿԱՎՄԵԱԼ ՀՆՀ. ԿՈԽ-  
ԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՐՆԱՅ անդամակցիլ ամեն 20 տա-  
րեկան ՀԱՅ, առանց սեռի և դաւանագի խըտ-  
րութեան:

ՅՕԴ. 2. — Կուսակցութեան անդամակցող  
ամեն անհատ պարտաւոր է երդնուլ թէ՝ Կու-  
սակցութեան զեկավարող սկզբունքներուն և  
օրագրի սպիրին և կազմական կանոնագրի տրա-  
մադրութեանց հաւատարիմ պիտի մնայ անպայ-  
ժան:

ՅՕԴ. 3. — Ուղէսպի նորեկ մը կարենայ  
ժանել կուսակցական շարքերուն մէջ, անհրա-  
ժեշտ է որ արդէն իսկ անդամակցող գոնէ եր-  
կու ընկերներ նպաստաւոր վկայութիւն տան իր  
ժամկին: Իրենց անհատական ու հանրային կեան-

Քին մէջ ուեէ կերպով արատաւ որուած մարդիկ  
չեն կրնար անդամակցիլ վերակաղմեալ Հնչ.  
Կուսակցութեան :

ՅՕԴ. 4. — Վերակազմեալ Հնչ. Կուսակցու-  
թեան շարքերուն մէջ մանող իւրաքանչիւր ըն-  
կեր պարտաւոր է՝

Ա. — Նիւթապէս և բարոյապէս աջակցիլ Կու-  
սակցութեան հզօրացման և տարածմանը :

Բ. — Աշխատիլ մէր Կուսակցութեան սկզբունք-  
ներուն հիմնաւորմանն ու իրագործմանը :

Գ. — Քոյր Կուսակցութեանց հետ կռիւ կամ  
բաղխում յառաջ բերող սլարագաներէ զգուշա-  
նալ, և անձնականութենէ հեռու կենալով վի-  
ճարանութիւնները սկզբունքային խնդիրներէ  
դուրս չի հանել :

Դ. — Կէտ առ կէտ հետեիլ կազմական կոնո-  
նագրի բոլոր արամադրութեանց, ինչպէս նաև  
այն ամէն հրահանգներուն, որոնք՝ ի հարկին  
պիտի տրուին մասնաւոր շրջաբերականներով:

Ե. — Առ նուազն մէկ տոլար ամսաբաժին վր-  
ճարել փոխարէն ստանալով ընկալագիր :

### ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ

ՅՕԴ. 5. — Վերակազմեալ Հնչակեան հինգ  
ու անկէ վեր թւով ընկերներ քով քովի գույզ  
կը ձեւացնեն Մասնածիւղ մը :

ՅՕԴ. 6. — Իւրաքանչիւր Մասնածիւղ կռւ-  
նենայ իր վարչութիւնը որ կընտրուի տարին ան-  
գամ մը, անդամներու մեծամասնութեան քը-  
ռէ է ով :

ՅՕԴ. 7. — Մասնածիւղի վարչութիւնը կը  
բաղկանայ հինգ անդամներէ, հետեւեալ պաշ-  
տօններով, Ատենապետ, Ատենադպիր, Գանձա-  
պահ. հաւաքիչ և երկու Խորհրդականներ :

ՅՕԴ. 8. — Վերակազմեալ Հնչակեան մաս-  
նածիւղերու վարչութիւնները պարտաւոր են.

Ա. — Մասնածիւղի ընկերներուն Փիղիքա-  
կան և բարոյական զարգացմանը խնամք տանիլ :

Բ. — Մասնածիւղի ընկերներուն ամսավճարնե-  
րը կանոնաւորապէս հաւաքելով մասնաւոր տո-  
մարի մը մէջ արձանագրել, և գոյացած ար-  
դիւնքէն գեղջելով տեղային պէտքերու յատկաց-  
եալ գումարը, մնացեալը հասցնել Նահանգային  
վարչութեան :

Գ. — Վեց ամիսն անգամ մը, մասնածիւղին  
բարյական ու նիւթական գործունէութեան հաշ-  
ուետուութիւնն ընել :

Դ. — Աշալուրջ հակել կազմական կանոնագրի  
արամադրութեանը վրայ :

Ե. — Միշտ յարաբերութեան մէջ մնալ Նա-  
հանգային վարչութեան հետ :

### ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 9. — Ամերիկայի շրջանակի Վեր. Հնչ.  
Մասնածիւղերը տարին անգամ մը պատգամա-  
ւորական ժողով գումարելով կընտրեն հինգ հո-  
գիէ բաղկացեալ նահանգային վարչութիւն մը,  
հետեւեալ պաշտօններով՝ Ատենապետ, Ատենա-  
դպիր, Գանձապահ և երկու խորհրդական ան-  
գամներ :

ՅօԴ. 10. — Նահանգային վարչութեան գըրիւաւոր գործերն ու պարաւականութիւններն են:

Ա. — Հսկել՝ որ Վեր. Հնչակեան մասնաճիւղերը անթերի գործադրեն Ծրագրի և Կազմական Կանոնագրի տրամադրութիւնները և անվհատ հետապնդեն կուսակցութեան առաջադրած բոլոր նպատակները:

Բ. — Ամենուրեք նորանոր մասնաճիւղերու կազմութեան փոյթ առնիլ տեղական ոյժերով կամ յատուկ գործիշներու ձեռամբ։ Գոյութիւն ունեցող մասնաճիւղերու կանոնաւոր ու բարեւք գործունէութեան վրայ հսկել։ մասնաճիւղերու բարոյական ու նիւթեական գործունէութեան համարատուութիւնն ստանալ անոնց միջն ծագում առած անհամաձայնութիւնները հարթել ելն։

Գ. — Մասնաճիւղերէ ստացուած բաժնեվճարներուն և գանազաններէ եղած նուիրատուութեանց և Վարչութեան ձեռամբ կատարուած ծախուց համար մասնաւոր տօմար մը ունենալ, պահելով միշտ ելքին արդարացուցից թուղթերը։

ՅօԴ. 11. — Նահանգային Վարչութեան իրաւասութեան տակ կը հարաբուին այն բոլոր հրատարակութիւնները որ կըլլան կուսակցութեան անունով, Ամերիկայի մէջ։

ՅօԴ. 12. — Նահանգային Վարչութեան անդամ ընտրուող մը պէտք է որ առնուազն երեք տարի ծառայած ըլլայ կուսակցութեան՝ իրեւ անոր օրինաւոր անդամը։

ՅօԴ. 13. — Եթէ Նահանգային Վարչութեան

անդամներուն մեծամասնութիւնը մէկանց հրաժարի, մնացեալ անդամները՝ գործը շարունակելով հանդերձ՝ արտակարգ Պատգմ. Ժողովը կը գումարեն, նոր Նահանգ. Վարչութիւն մը ընարելու համար։

#### ՊԱՏԳԱՄԱԿՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՅօԴ. 14. — Պատգ. Ժողովը կը գումարուի Նահանգ. Վարչութեան յարմար դատած տեղը, տարին անդամ մը։

ՅօԴ. 15. — Շրջանակային Պատգ. Ժողովին մօտ, իւրաքանչիւր մասնաճիւղ 5—20 անդամի համար կունենայ մէկ ներկայացուցիչ, իսկ անկէ ետք իւրաքանչիւր 20 անդամի համար՝ մէկ ներկայացուցիչ աւելի։

ՅօԴ. 16. — Շրջ. Պատգ. Ժողովին պատգամաւոր ընտրուող մը պէտք է որ առնուազն մէկ տարի ծառայած ըլլայ կուսակցութեան իրը անոր մէկ օրինաւոր անդամը։

ՅօԴ. 17. — Պատգամաւոր մը երկու ձայնէն աւելի չի կրնար ներկայացնել։

ՅօԴ. 18. — Նահանգ. Վարչութեան անդամները չեն կրնար պատգամաւոր ընտրուիլ, բայց իրենց համարատուութենէն դուրս՝ ամեն խնդրի մէջ ձայն ունին՝ հաւաքարար 3 քուէի իրաւունքով։

ՅօԴ. 19. — Պատգ. Ժողովը օրինաւոր կը

նկատուի երբ Մասնաճիւղերու երկու երրորդին  
ներկայացուցիչները ներկայ են :

ՅՕԴ. 20. — Արտակարգ Պատգ . Ժողով կը  
դումարուի :

Ա. — Երբ Նահդ . Վարչութիւնը հարկ տեսնէ :  
Բ. — Երբ շրջանակին մասնաճիւղերուն մե-  
ծամասնութիւնը պահանջէ :

Գ. — Երբ Նահդ . Վարչութիւնը լուծուած ըլ-  
լայ :

ՅՕԴ. 21. — Պատգ . Ժողովի գլխաւոր գոր-  
ծերն ու պարագանութիւններն են .

Ա. — Շրջանակի մէկ տարուան գործունէու-  
թեան նիւթական և բարոյական համարատուու-  
թիւնն ստանալ :

Բ. — Նահդ . Վարչութեան հաշիւները քննել  
և վաւերացնել :

Գ. — Յաջորդ Նահդ . Վարչութիւնը ընտրել :

Դ. — Շրջանակի յառաջացման մասին մտածել :

Ե. — Շրջանակին մէջ ծագած վէճերն ու ան-

համաձայնութիւնները կարգադրել :

Զ. — Ապագայ գործունէութեան մասին որո-

շումներ անցնել և յանձնել նորընտիր Նահդ .

Վարչութեան ի գործադրութիւն :

### ԿԱՐԴԱՊԱՀԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

ՅՕԴ. 22. — Ամեն ընկեր պէտք է որ ան-  
պայման ներկայ ըլլայ բոլոր անդամական ժո-  
ղովներուն :

ՅՕԴ. 23. — Իւրաքանչիւր ամսէ վերջ , ա-

մեն ընկեր պէտք է որ իր խոստացած ամսավը-  
ճարը վճարած ըլլայ :

ՅՕԴ. 24. — Մասնաճիւղերը իրենց գրամա-  
կան գործառնութիւնները կատարելու են միմի-  
այն Նահանգային Վարչութեան հետ :

ՅՕԴ. 25. Առանց Նահանգային Վարչութեան  
գիտութեան գործիշ կամ ուրիշ ուեէ ընկերոջ  
յանձնուած գրամինները լոկ անհատական կը նկատ-  
ուին և Նահանգ . Վարչութիւնը ուեէ շափով պա-  
տասխանատու չէ անոնց համար :

ՅՕԴ. 26. — Առանց Նահդ . Վարչութեան  
գիտութեան մասնաճիւղերը իրարու հետ թղթ-  
թակցելու իրաւունք չունին :

ՅՕԴ. 27. — Եթէ մասնաճիւղի ընկերներէն  
մին գժգոհութիւն , բողոք կամ առաջարկ ունե-  
նայ ուեէ խնդրոյ մասին , պէտք է զայն ներկա-  
յացնէ մասնաճիւղի վարչութեան : Գոհացում  
շտանալու պարագային գիմելու է անդամական  
ժողովին : Անկէ ալ գոհացում շտանալու պա-  
րագային գիմելու է Նահդ . Վարչութեան :

ՅՕԴ. 28. — Նահդ . Վարչութեան կարգա-  
դրութեանց գէմ ուեէ գժգոհութիւն կարելի է  
ներկայացնել Շրջ . Պատգ . Ժողովին , որ Շրջա-  
նակին գերագոյն համարառու և օրէնսդիր մար-  
մինն է , և որուն բոլոր կարգադրութիւններն  
ու վճիռները պարտաւորիշ են ամեն ընկե-  
րի և մասնաճիւղի համար :

ՅՕԴ. 29. — Շրջ . Պատգ . Ժողովի անօրի-

նութեամբ գատապարտուած ռեէ ընկեր կամ  
մարմին երբ ինքզինքը անիրաւուած կըզգայ,  
պէտք է սպասէ յաջորդ Շրջ . Պատգ . Ժողովի  
գումարման և իր խնդիրը վերաքննել տոյ հոն  
միայն . այս տրամադրութեան անսաստողները  
ծանր պատասխանատուութիւն կը հրաւիրեն ի-  
րենց վրայ :

**ՅՕԴ. 30.** — Ամերիկաի Շրջանակին մարմին-  
ներու անօրինութենչն գոհ չի մնացող ընկերնե-  
րու առջև , դեռ կը մնայ կեդր . Վարչութեան և  
ընդհ . Պատգ . Ժողովին դիմելու իրաւունքը :

### ՊԱՏԺԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

**ՅՕԴ. 31.** — Առանց բանաւոր պատճառի ե-  
րեք անգամ անդամական ժողովներէ բացակայող  
և երեք ամիս իր անգամական առւրժը չի վճա-  
րող ռեէ ընկեր ազգարարութիւն կսահնայ նախ :  
Թերացումը շարունակուելու պահուն կարտաք-  
սուի շարքերէն :

**ՅՕԴ. 32.** — Ռեէ ընկեր եթէ չրջանակին  
կամ իր մասնաձիւղին հմայքին վեասող արարքի  
մը մէջ բռնուի անմիջապէս կարտաքսուի շար-  
քերէն :

**ՅՕԴ. 33.** — Եթէ ռեէ ընկեր իր Հնչակեան  
գործիչի կամ ընկերի հանգամանքը շահագոր-  
ծելով չրջանակէն դրամ չորթել փորձէ իսկոյն  
և հրապարակաւ կարտաքսուի կուսակցութենէն :

### ԵՐԿՐՈՒԾ ՊԵՏՐ

Կերդնում յանուն պտու ոյս , յանուն  
Հայրենիքիս նուիրական բոլոր սրբութիւննե-  
րուն՝ միշտ հաւատարիմ մնալ Վերակազմեալ  
Հնչակեան կուսակցութեան սկզբունքներուն և  
անոր ներկայացուցած նուիրական դատին : Կերդ-  
նում ամեն զոհողութեամբ և ի հարկին արեան գը-  
նով ծառայել անոնց յաջող իրականացմանը : Հայ-  
րենադրութին սահմանուած պատուհասող պա-  
տիժը ըլլայ իմս՝ եթէ ռեէ կերպով դաւաճա-  
ներ իմ ուխտիս ու գիտակցօրէն ու չարակամօ-  
րէն վեասեմ Վերակազմեալ Հնչակեան կուսակ-  
ցութեան ու անոր ներկայացուցած սուրբ դատին :



## Յ Շ Ա Գ Ի Բ

ՎԵՐԱԿԱՑՄԵԱԼ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը թուրքիոյ սահմանադրական նոր ռէժիմի հարկադրած նոր պայմաններուն և պահանջներուն իլրացումն, Հայ հասարակութեան կուգայ ներկայացնել յետագայ Ծրագիրը, որ պիտի ծառայէ իրեւ ուղեգիծ Վերակազմեալ Հնչակեան շրջանակներուն նոր դորձունէութեան:

Մեր կուսակցութիւնը իր երկար տարիներու գոյութեան ընթացքին Հիմնական Ծրագրէն միշտ իրաց թողած ըլլալով ընկերվարական (socialistic) և ռամկավարական (democratic) վարդապետութիւնները կամ նմանօրինակ միջազգային աշխարհայեցողութիւնները, այսուհետեւ ալ պիտի շարունակէ դորձել նոյն հիման վրայ, և իրեւ զուտ ազգային-քաղաքական կուսակցութիւն, իր սեւեռուն ուշադրութիւնը պիտի նուիրէ մեր Ազգին դարաւոր իրաւանց պահպանմանը, և վարչական, կրթական, եկեղեցական, լեզուական, պատմական, գրական ու անտեսական հաստատութեանց և իրաւանց բարգաւաճմանը՝ սահմանադրական նոր ոգիով։ Պիտի շեշտենք հոս, որ մեր կուսակցութիւնը չի դաւանիր թէ ինքնին վասսակար վարդապետութիւններ են ընկեր-

վարականութիւնը կամ ռամկավարութիւնը, բայց նոյն ատեն մենք համոզուած ենք թէ քաղաքակրթութեան նախնական աստիճաններուն վըսյ գտնուող ժողովուրդի մը մէջ—ինչպէս է մեր ազգը՝ ստուար մեծամասնութեամբ— զործող կուսակցութեան մը աւագ պարտականութիւնը պէտք է ըլլայ՝ զբաղիլ զուտ ազգային գոյութեան ու բարօրութեան յարակից խնդիրներով, առանց երրէք տկարացնելու մեր ճիգերը՝ միջազգային ընկերական կամ անտեսական հարցերու բրօբականառով։

Եկատելով՝ ուրեմն՝ որ թուրքիոյ մէջ ազատական կառավարութեան մը վերջնական ու իրական հաստատումը և սահմանադրական օրինաց անխափան գործադրութիւնը առաւելապէս կախում ունի քաղաքական կուսակցութեանց և անոնց միջոցաւ՝ Հայ ազգին ամեն գասակարգերուն միաբան և միահամուռ ջանքերէն, մեր կուսակցութիւնը պիտի աշխատի որ՝

Ա. — Օսմանեան Սահմանադրութիւնը վերաքննութեամբ կատարելագործուի, ազգերու իրաւանց հաւասարութեան, և զանազան ցեղերու ինքնուրոյն պահանջներուն և պէտքերուն գոհացման ոկզբունքին վրայ յենլով։

Բ. — Սյնքան ատեն որ սահմանադրական կապավարութիւն մըն է որ անաշառութեամբ կը վարէ Օսմանեան կայսրութեան գործերը, ու եթէ մասնաւորաբար Հայկական Գաւառներուն մէջ միանգամ ընդմիշտ վերջ գտնէ հարստահարութեան, կոտորածի ու սարսափի տիրապետու-

թիւնը, մեր կուսակցութիւնը անջատողական ու-  
գի չկարենալով ունենալ՝ պիտի հրաժարի միջադ-  
գային գաշնագրերով Հայոց երաշխաւորուած  
իրաւունքներէն։ Տաճակահայաստանը Օսմաննեան  
կայսրութեան անբաժանելի մասը նկատելով հան-  
գերձ, մենք պիտի աշխատինք որ տակաւ, Հայ-  
կական Գաւառները վայելեն տեղական ինքնա-  
վարութիւն, վարչական, կրթական ու օրէնս-  
դրական գործերու մէջ։

Գ. — Նախկին բանակալ և տարբազագրիչ  
վարչութեան վերագարձի ուեէ փորձ՝ կանխօրէն  
գատապարտելի է մեր կուսակցութեան կողմէ։  
այս նկատումով՝ պարտք կը դնենք իւրաքան-  
չիւր Վերակազմեալ Հնչակեանի վրայ։ ամեն  
կերպով մաքատիլ այդ կարգի պատահականու-  
թեան մը դէմ, ու ժողովուրդի ամէն խաւերը  
պատրաստել, ամեն գնով պաշտպանելու համար  
Ազատութիւնը և Սահմանադրութիւնը։

Դ. — Սահմանադրական ազատ րէ ժիմի տար-  
րական արաւայայսութիւններ կը համարինք  
խօսքի, մամուլի, գաւանանքի, ժողովներու և ըն-  
կերակցութեանց կազմութեան ազատութիւն, ան-  
ձի և ընակարանի անձեռնմխելիութիւն, թղթակ-  
ցութեանց ազատութիւն, տեղափոխուելու դէմ  
գրուած արգելքներու վերացում, Օսմաննեան  
ներքին գանառներու համար հաստատուած ան-  
ցագրերու ջնջում, ևայլն։

Ե. — Բացի վերոգրեալ տարրական պահանջ-  
ներէն, Վերակազմեալ Հնչակեան կուսակցու-  
թիւնը պիտի աշխատի նաև որ Ազգային Սահ-

մանագրութեամբ երաշխաւորուած մեր Ազգ-  
Վարչական առանձնայատուկ հաստատութիւննե-  
րը և առանձնաշնորհեալ իրանունքները անխա-  
թար պահպանուին և կատարելագործուին, առ-  
գատական նոր ոգւով։

Զ. — Մեր կուսակցութիւնը կը դաւանի թէ՝  
Օսմ. պետութեան բալոր ազգութիւնները արտա-  
քին վատանգի մը դէմ մայր հայրեննեաց պաշտ-  
պանութիւնն սահանձնելու պարտաւոր ըլլալով,  
Հայերն ալ պէտք է մասնակցին զինուորական  
ծառայութեան, կատարելով իրենց զինուորի պար-  
տականութիւնը բարեկարգեալ զինուորական  
վարչութեան մը տակ։

Է. — Մերայս պատրաստակամութեան փսխա-  
րէն կուսակցութիւնը կը պահանջէ որ Համբտիէյի  
հայաջինջ գունդերը ցրուին և զինաթափ ըլլան,  
խաղաղութեան ժամանակ զօրախումբերը իրենց  
պատկանեալ գաւառին մէջ ծառայեն, Հայ զին-  
ուորներու ազգային սովորութիւնները յար-  
գուուին և իսլամ ու քրիստոնեայ գունդերուն մի-  
ջեւ ուեէ խարսութիւն չի դրուի։

Ը. — Վերակազմեալ Հնչակեան կուսակցու-  
թեան իւրաքանչիւր անդամ՝ պարտաւոր է իր  
շրջանակին մէջ բրօրականտ ընել և աշխատիլ՝  
որպէսզի աղաւական ու անկաշառ անձնաւորու-  
թիւնք միայն երթան Օսմ. Խորհրդարան։ Ընտ-  
րութիւններէն վերջ ալ իւրաքանչիւր ընկերի  
պարտքն է՝ ուշի ուշով հետեւիլ խորհրդարա-  
նական գործունէութեան և սահմանադրական ու

անխտրական ոգիի հակառակ ուէ արարք մատ-  
նանիշ ընելով դատապարտել:

Թ. — Գրաւուած հողերու և ինչքերու վե-  
րադարձումը, Հայկական կոտորածներու առ-  
թիւ յաջցապարտ ճանցուած պաշտօնէից չնոր-  
հազրկումը, նիւթապէս ամենէն աւելի վաս-  
ուած գաւառներուն դրամական հատուցում՝  
կառավարութեան կողմէ, և բոլոր այս կարգի  
պահանջներ մեր կուսակցութեան կողմէ պիտի  
պաշտպանուին :

Վարչութիւնս այն հաւատքը ունի թէ՝ Հայ  
քաղաքական Մարմինները այլեւս մէկդի ձգած՝  
նախկին կուսակցական մրցակցութիւններն ու  
ատելութիւնները, միահամուռ ճիգով պիտի աշ-  
խատին տաճկահայ ժողովուրդի ինքնապաշտպա-  
նութեան և ինքնագիտակցութեան դժուարին  
գործն ի գլուխ հանելու, ու Օսմ. Կայսրութեան  
մէջ մշտնջենաւորելու համար սահմանադրական  
ու անխտրական ըէժիմ մը:

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՉ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐ.ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



